



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԾԱՅԻՐ ՔԱՀԱՆԱՑ ԿԵԶԻՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 14 ՕԳՈՍՏՈՍ 1910

ԹԻԻ 20

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրուշ
Գաւառաց համար տարեկան	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Զեռ. ք. ծախսուի պահպ.	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեչիքսաւ, Հայոց եկեղեցի

درسماعادته بتشكطاشده ارمنى كليساسنده (داجاز) فزرتسى مديرى پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

Զարմարծըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրբէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէղիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւն Բնյ.
4. Տ. Սուրբաս Բնյ. Պալլազեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյաղճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Դարձեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պողոս Վրդ. Գալթեանեան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՖԻՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱՔԵՐԴ.—Մ. Սանտահան էֆ.
ԳԱՂԱՏԻՍ.—Առաջնորդ Տ. Բարգէն Ծ. Վրդ. Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղանուշի
ԵԴԵՍԻՍ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕՋԱՍ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքեան
ԵՐՋԱՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտանճեան
ԶՄԻՒՆԻՍ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ. Սարգիսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ. Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վրդ. Ապանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սաստէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատլեան
ԿԻՒՄԻԼԺԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշանեան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գասպարեան
ՄԱՆՉԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ա. Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժապետեան
ՄԱՐՉՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պրապեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բաղարատ Վրդ. Վարդազարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ. Տառեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԼԷՔԻՍԻՐ.—Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մաղլումեան
ՊԱՂՏԱՍ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ա. Եպիսկ. Կէօմրիւքեան
ՊԱՖՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻՉԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
ՊԷՅՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եղեկիլ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա. Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒԹ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրջնիկեան
ՌՈՏՈՍԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բարթոլ Ա. Բնյ. Թագմեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ. Օտապաշեան
ՍԵՐԱՍԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլէ Բնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՖԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնեսիոս Բնյ. Տրէզեան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօփլէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Տ. Առաքելեան
ՓԱՐԻՉ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձապուհ Բնյ. Բիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մանիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 14 ՕԳՈՍՏՈՍ 1910

ԹԻԻ 20

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ. — ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Մայր մը, ՋԱՐՄԱՅԻ ՔԱՅԱՆԱՅ — ԿՐՕՆԱ-ՊԱՏ-ՄԱՆԱՆ, Ստեփանոս Սրենցի (շոր.) ԵՂԻՇԷ Վ. ԽԱՋԵՐԵԱՆ. — ՀԻՆ ԷՋԵՐ, Նարեկը աշ-կարհարար, Սիրտիրու խորհրէն խօսք առ Տիրուհին, (Թարգմ.) Յ Գ. ՄՐՄԵՐԵԱՆ. — ԲՆԱԽՈ-ՍԱ-ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ, Վիշտը, ԼԵՒՈՆ ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ. — ԲԵՐԹՈՒԱԾՆԵՐ, Աստուծոյ Ջայը, ՍՈՒՐԵՆ Վ. ՔԱԼԵՄԵԱՆ. — Պատմ. Հայ. Ջայնագրութեան, ԱՐԻՍ. ՔԶ. ՀԻՍԱՐԼԵԱՆ. — ԱԶ-ԳԱՅԻՆ. ԽՍԱՆ-ԲԸ, Դէպ ի համիրաշխութիւն. — Եկեղեցական բարեկարգութիւնը, ԽՄԲ. — Շաբթուան կարեւոր լուրեր եւ Ժողովոց որոշումներ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՅՐ ՄԸ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

Տարւոյն հինգ տաղուարներուն մէջ Ս. Աստուածածնի վերափոխումը մէկն է այն հանդիսաւոր օրերէն, զորոն Հայ. Առաքելական Ս. Եկեղեցին կը տօնէ մեծահանդէս, ուրիշ հին Եկեղեցիներու նման (*): Ամբողջ քրիստո-

նէական գրականութեան մէջ Եկեղեցւոյ Հայրերը բանաստեղծական ա-մէնէն գեղեցիկ կտորները՝ բարձր գաղափարականի մը նուիրուած սըր-տագրաւ հատուածներ՝ ձօնած են Ս. Կոյսին: Ասոնց մէջ պզտիկ տեղ մը չէ որ կը գրուեն Հայ Եկեղեցւոյ Հայրապետներն ու Վարդապետները, որ անուշ Շարականներով, Տաղերով, «Գանձ»երով ներկայած են այն մեծ կիներ, մայրութեան և առաքինու-

(*) Ս. Աստուածածնի մասին Բրիտանական Եկեղեցւոյ խորունկ յարգանքը լուրջ պատճառներ ունի: Նեստրականութեան դիմ բռնութիւնը և Աստուածամորիւնը: Նեստր կ'որակուի Բրիտանի Աստուածութիւնը: Կ'ըսէր թէ Բրիտան մեզի պէս հասարակ մահկանացու մըն էր. հետեւապէս Մարիամէն ծնածը մարդ էր, եւ Մարիամ ասոր համար «մարդածին» պէտք է ըսուէր եւ ոչ թէ «Աստուածածին»: Վասնզի, Կ'ըսէր Նեստր, Բրիտան ոչ թէ Աստուած էր, այլ Աստուած իր

մէջ բնակեցաւ, ինչպէս՝ զոր օրինակ՝ արձան մը կը բնակի օսանալի մը մէջ: Այս կարծիքը ուղղափառ չէր. Բրիտան կ'ասարեալ Աստուած եւ կ'ասարեալ մարդ էր. եւ Եկեղեցին իր ուղղափառութիւնը պաշտպանելու համար Նեստրի լաւափառութեան դիմ, պնդեց «Աստուածածին» քաջատրտեան վրայ, եւ իր յարգանքը ուղադրաւ հանգամանքով մը արձայայտելու համար, այն-պէս կարգադրեց որ թոյլոր Եկեղեցիներու մէջ Աստուածածնի պատկերը առաջին տեղը գրաւէ: («Լոյս», 1905, թիւ 33):

թեան մարմնացումը, որ Փրկիչ մը ծնաւ աշխարհին, գերազանց տիպա-
րը հանգիստանալով մաքրութեան, սրբ-
ութեան, անմեղութեան:

Քերթողահայրը իր հոգեզմայլ շա-
րականներով, որ վաղն առաւօտ կ'եր-
գուին, արժանաւոր յարգանքով մը
կը բարձրացնէ Ս. Կոյսը, խտացնելով
անոր Վերափոխման հրաշալի պատ-
մութիւնը: Սրտայոյզ ու ժողովրդա-
կան է մանաւանդ Ճաշու Շարականը՝
իւր փափուկ իմաստով ու քաղցր ե-
րաժշտականութեամբ:

«Անթառա՛մ ծայիկ, անդատապարտ շառու-
ւիղ, որ ծլեցար Յեսսէի արմատէն, գրեզ եսայի
կանուխէն Հոգիին եօթնարփի շնորհաց ընդունա-
րան հռչակեց: Աստուածածի՛ն կոյս, քեզ կը մե-
ծարենք:

«Համեղամաշակ պտուղին ո՛վ բանաւոր բա-
րունակ, որմէ կ'ծուեցաւ անսպառ ոյկոյզը՝ յու-
րախուժիւն մեզ որ տրտում էինք գիտութեան
ծառէն ուտելէն ի վեր. ո՛վ անսրատ սրբուհի,
ամէնքս քեզ կը մեծարենք:»

Նարեկացին, միջադգային կրօն.
գրականութեան մէջ իսկ հազիւ թէ
իւր նմանը ունեցող այդ մեծ հանճա-
րը, որուն գիրքը ամենաբարձր գիրք
մը կը գրաւէ քրիստոնէական գրա-
կանութեան մէջ, «ի խորոց սրտից
խօսք» մ'ուղղած է (Բան 2.) առ Տի-
րուհին, հոյակապ հատուած մը իւր
գոհար ողբերուն մէջ, ուր բանաս-
տեղծական թռիչքը ամենալսեմ բարձ-
րութեան մը կը հասնի ի ներքող Ս.
Կուսին, «հրեշտակ ի մարդկանէ,
մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր
արքայուհի, անխառն իբրեւ զօդ, մա-
քո՛ւր որպէս զլոյս, գերազանց քան
զքնակութիւն անկոխելին սրբութեանց,
երանաւէտ խոստմանն տեղի, եղե՛մ
չնչական, ծառ կենայն անմահից»:

Նոյնքան վսեմ տողերով ներքո-
ղուած է Տիրամայրը Ս. Ներսէս Լամբ-

րոնացիէն, Հայ եկեղեցիի հօր պաշտ-
պան այդ մեծ հոգիէն: Ու Տաղա-
րանը լեցուն է «Գանձ»երով, —ճըշ-
մարիտ գանձեր—ու Տաղերով, որոնց
իւրաքանչիւրն իւր պարզութեան մէջ
ունի անոյշ հրապոյր մը:

Գեղեցիկ գեղ, զովելի, անման
Վեհ տաճար մաքուր անման,
Անման, կոյս Մարիամ, անման:
. . . Դու լուսեղէն տաճար ես,
Ոսկեպսակ խորան ես,
Դու մարգարիտ անգին ես:

Այս կիներ՝ կոյս մը բայց մայր՝մըն
էր միանգամայն: Անշուշտ բարձր ա-
ռաքինութիւն մըն է հրաժարիլ աշ-
խարհիկ կեանքէն և անոր բազմադի-
մի զուարճութիւններէն, և ինքզինքը
նուիրել Աստուծոյ ծառայութեան: Ս.
Մարիամ աննկարագրելի բարձրու-
թեան մը, կատարելութեան մը հաս-
ցուց այդ առաքինութիւնը, և ատով
իսկ արժանի հանդիսացաւ Աստուծոյ
մայրն ըլլալու, Արարիչի մը ծնունդ-
տալու, միջոցն ըլլալու մարդկային
հոգեւոր կեանքի փրկութեան, եւայի
խաբուելովը գահափիժած Կորուստի
վիհէն ազատելուն, և աստուածային
անհուն գթութեան առարկայ դառ-
նալուն: Անիկա կոյս էր, Աստուածա-
մայրութեան բարձր պատիւին ար-
ժանի ըլլալէ առաջ, նոյնքան կոյս,
մաքուր, սուրբ մնաց անկէ վերջ ալ,
օծուած ըլլալով աստուածայնութեամբ
մը, քանի «թափուած իւղ է» Աս-
տուծոյ անունը. «Իւղ թափեալ է ա-
նուն քո»:

Իր կեանքը հետեւելի օրինակ մը
պէտք է ըլլայ բոլոր մարդոց, մանա-
ւանդ կիներուն: Անշուշտ ամէնուն
տրուած չէ անոր մաքրութեան, անոր
առաքինութեան, անոր սրբութեան

աստիճանին Ռաւնիյ . բայց ամէնուն կարողութեան սահմանին մէջ է առ այն ձկնի, ջանալ մաքուր ըլլալու անոր պէս, ունենալ սրտի, հոգիի ու մարմնի մաքրութիւն:

Այս խօսքերով արդեօք մեր աղջիկները աշխարհիկ կեանքէն քաշուած կ'ուզենք տեսնել, կ'ուզե՞նք զիրենք նուիրուած տեսնել կուսութեան, մայրապետութեան սև քօղով ծածկած իրենց դուլը, վանքի մը մենութեան ու մեռելական լուսութեան մէջ թաղելու համար իրենց կեանքը, իրենց թարմ երիտասարդութեան ամբողջ եռանդն ու յոյզերը, մարելու, թօշնելու ինչ կեանք, ոգեւորութիւն, սուղութիւն որ ունին իրենց սրտին մէջ, մեռցնելու մարդկայնական ամէն զգացում, երիտասարդական ամէն յոյզեր, և իրենց կեանքի ամբողջ օրերն անյոյնելու պահքի, աղօթքի շարունակական ծիւրումի մը մէջ:

Միջինդարեան սխալ ըմբռնում մը պիտի ըլլար այդ . խաւարակուռ ժամանակներու յատուկ մելորանք մը այն համոզումը թէ յաւիտենական երջանիկ կեանքի մը հասնելու միակ ճամբաներն էին վանքերը, և այդ մեռելատաններու անվերջանալի աղօթքի և սաղմոսերգութեանց մը մոնշները:

Այդ չէ սակայն քրիստոնէութեան ճշմարիտ ոգին «Միրեյէք զմիմեանս», իրարու օգնեցէք, թշուառին օգնութեան հասէք: Ահա՛ Յիսուսի առաջին պատուէրը: Ճգնաւորութեան, մայրապետութեան, կուսակրօնութեան համար իր բացարձակ պատուէրն է՝ «Որ կարողն է տանիլ՝ տարցի»: Բնութեան օրէնքներէն չեղում մ'է կու-

սակրօնութիւնը, և Բնութիւնն ստեղծողը, և այդ օրէնքներն հաստատողն է նոյն ինքն Աստուած:

Յիսուս անկարելին չի պահանջեր մարդոցմէ. չստիպեր կատարելու ինչ որ վեր է մարդկային կարողութենէն: Միակ պայման չի դնել աշխարհային կեանքէ մեկուսացումը. ընդհակառակն մեզի կը ցուցնէ շիտակ ճամբան՝ պատուոյ և պարկեշտութեան սահմանին մէջ ապրելու ազնիւ կեանք մը: Վայելել աշխարհի բարիքներն ու հաճոյքները՝ չափաւորութեան ու պարկեշտութեան սահմանին մէջ՝ հակառակ չէ երկնաւոր Վարդապետին հրամանին: Միակ պայմանը քրիստոնէական կեանքի՝ չչեղին է խղճի մղումներէն, ճշմարտութենէ, սրտի մոլորութենէ: Ինչ որ պաշտելի է Ս. Աստուածածնի քով, անոր մարմնաւոր կուսութենէն աւելի սրտի կուսութիւնն է: Այդ կուսութիւնը պահել պարտքն է ամէն անոնց որ քրիստոնէայ կեանքով մը ապրիլ կ'ուզեն, ամուսնանալէ, զաւակներու տէր ըլլալէ ետք ալ, — և մանաւանդ անկէ՛ ետք — մեր աղջիկներն ու մեր կիները պէտք է հետամուտ ըլլան պահելու այդ խոհալ մաքրութիւնը, սրբութիւնը, ճշմարիտ կուսութիւնը, զգուշութիւնը ազատ մտածումներէ, ամուսնական կեանքի սրբութիւնն ու նուիրականութիւնն եղծող տգեղ ընթացքներէ, և նոյն իսկ մտածումներէ:

Ո՛րքան ազնիւ, աստուածահաճոյ գործեր կարելի է կատարել, առանց ստիպում ըլլալու վանքի մը մթին անկիւններուն մէջ թաղելու կեանքը, և ոչնչացնելու իր գործունէութեան ամբողջ եռանդը:

Կիներ, մայրեր ու աղջիկներ, որ

խորունկ պաշտանքն ունիք Տիրամայրին, որ ձեր բոլոր վիշտերուն ու տագնապներուն մէջ օգնութեան կը կանչէք ձեր պաշտպան Սրբուհին, անկէ առնելիք ձեր օրինակը պէտք է ըլլայ անոր գթառատ սիրտի տրուփումները: Թշուառներ ունինք (և միջքան) սփոփանքի կարօտ, որբեր ունինք անտէր, հացի և ուտումի կարօտ, զրկուածներ՝ պաշտպանութեան կարօտ. ատոնց հոգածութեան, ատոնց ապագայի բարեւուման, անսուղ մարմիններուն հաց, անսուղ միտքերուն ուտում, յուսահատ, թըշուառ որբերու և սրբուհիներու պարկեշտ ապագայ մը պատրաստելու համար ձեր կողմէ կտտարուած դիտակից շարժում մը, ջանք մը, օժանդակութիւն մը. ահա՛ ատոնք պիտի ըլլան՝ հոգիի ու սրտի իտէալ մտքութիւն մը միացած՝ այն միակ գործերը որ մեզի իրաւունք ստան յուսալու գթութեանը ու պաշտպանութեանը անոր որ մայրերու մայրը եղաւ, ապաւինելու անոր մայրական հովանաւորութեանը, անոր անդառնալի բարեխօսութեանը՝ իր միածին Որդիին մօտ — որ Աստուծոյ՝ Որդին է միեւնոյն ատեն — մեր հոգեւոր, յաւիտենական կեանքի փրկութեանը, և այս աշխարհի մէջ ալ մեր երջանկութեանը համար:

ՋԱՐՄԱՅՐ ՔԱՆԱՆԱՅ

ԵՆՈՐՀԱՆԱԼՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւն խորին շնորհակալութիւն կը յայտնէ հեռաւոր քե մերձաւոր այն բոլոր անձնատուներէն որ բաժնի եւ գրով համակրութեամբ ողջունած են Յանգրի շաքաքերի վերածումը, նաեւ ազգային քերթերու եւ իմաստասիր նիւ-ետիի հոգնակ լուրջ շաքաքերի, որ իրենց համակրական ջետ օղերով կը փայտեցնէ զմեզ՝ անսայթաք յառաջ օսնելու սկըսուած կաթնոր բայց դժուարին գործը:

ԿՐՕՆԱ.-ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵՑԻ

(Շար. 16րդ քիւռն)

Կը յիշատակուի նաեւ Վրթանէս եպսկ. Զ. դարուն վերջերը, որ նոյնպէս կը կոչուէր քրիստոյ: Է. դարուն սկիզբը անուանի էր Մաթուսաղայ՝ որուն համբաւը լսելով Կոմիտաս Կաթողիկոս, անոր յանձնեց իր Թէոդորոս եղբորորդին որպէս զի կրթէ և դաստիարակէ: Է. դարուն վերջերը հռչակաւոր էր Մովսէս եպսկ.՝ որուն աշակերտեցաւ Ստեփանոս Սիւնեցի:

Ասոնք եղած են գլխաւոր ներկայացուցիչները Սիւնեաց վարդապետարանին՝ որոնցմէ մին եղաւ նաեւ Ստեփանոս որ երբ Անանիա եպիսկոպոս ձեռնադրել տալով զրկեց ի Սիւնիս, ինք մնաց ինչպէս ըսինք՝ Դուին՝ Կաթողիկոսին մօտ ձիւտ այս միջոցին էր որ Դուին իր գանուէր Հայոց իշխանապետը և սպարապետը՝ Սմբատ ասպետ Բիւրատեան՝ որ երբեմն Յունաց արքունիքը պաշտօն վարած եւ կրօնական ու արտաքին ուսմանց քաջ տեղեակ էր: Ասոր հետ Ստեփանոս վիճաբանութեան մը բռնուեցաւ Յունաց և Հայոց դաւանութեանց տարբերութեանը վրայ:

Այսպիսի վիճաբանութեան մը մէջ՝ ուր յունարէնի և փիլիսոփայութեան տեղեակ ըլլալը մեծապէս պիտի օգնէր դատին՝ բնական էր որ Ստեփանոս պիտի չկրնար յաղթող դուրս գալ. որովհետեւ այնչափ տեղեակ չէր յունարէն լեզուին և փիլիսոփայական ուսմանց, մինչդեռ Սմբատ հըմուտ էր յունական Ս. Հայրերուն վարդապետութեանը: Տեսնելով Ստեփանոս թէ իր հայրենեաց մէջ սորվածը բաւական չէր զինքը ամէն կերպով պաշտպան կեցընել իր Եկեղեցւոյն, ուղեց երթալ ի Յունաստան և բուն իսկ աղբիւրներուն մէջ քննել Հայ Եկեղեցւոյն դաւանած վարդապետութիւնը:

Եւ սակայն՝ այդ մտադրած ուղեւորութիւնը քիչ մը դժուար պիտի յաջողէր, որովհետեւ Սմբատ գժտած ըլլալով իրեն

հետ՝ կրնար արգելք մը յարուցանել։ Ուստի ուրիշ միջոց մը խորհեցաւ. ծպտեցաւ և գաղտնի խոյս տալով Դուինէն, գնաց Կ. Պոլիս։ Հոն, Ստեփանոս գտաւ յոյն իմաստասէր⁽¹⁾ մը՝ որ «հմուտ էր արտաքին իմաստից», ինչպէս կ'ըսէ Օրբէլեան, և իբրեւ ճգնաւոր կ'ապրէր ի միջնութեան։ Ասոր աշակերտելով ո՛չ միայն սկսաւ սորվիլ յունարէն լեզուն և փիլիսոփայութիւնը՝ որոնց համար գացած էր արդէն՝ այլ և աշխատեցաւ նաև լատիններէն լեզուն, արեւմտեան Հայրերու վարդապետութեանց ալ ծանօթանալու գովելի նպատակովն անշուշտ։

Այսպէս Ստեփանոս յարմար առիթը գտած էր իր սիրած ուսմանց կատարելապէս հմտանալու, եթէ երբեք ունէ մէկը արգելք չըլլար իր յառաջդիմութեան։ Եւ իրաւցեռնէ՝ Սմբատ ատպետ՝ որմէ գաղտնի խոյս տուած էր Ստեփանոս Դուինէն, լսելով անոր Կ. Պոլիս փախած ըլլալը, անմիջապէս լուր տուաւ ժամանակին կայսեր՝ Լեւոն Իսաւրացիի՝ նոյն ատեն գրելով նաև թէ էր նա «Հարափառ ոմն, անարգիչ թագաւորութեան քո և հայհոյիչ սուրբ հուստոյդ»։ Կայսրը առնելով այս լուրը, հրաման կ'ընէ որ անմիջապէս արքունիքը բերուի Ստեփանոս և քննուի։ Իսկ սա՝ որ նախապէս խրատուած էր իր վարժապետէն՝ պատասխան տուաւ զինքը քննողներուն և ըսաւ թէ ինք ուրիշ մը հետ գործ չունէր, այլ խեղճ մ'ըլլալով եկած էր իր ապրուստը հոգալու և միւս կողմէ իր ուսումը յառաջ տանելու համար։ Այս պատասխանով միայն կրցաւ ազատիլ Ստեփանոս կայսեր բարկութենէն, և անկէ վերջը սկսաւ համարձակօրէն ապրիլ քաղաքին մէջ։

Հոս՝ լուր թեամբ չանցնելու համար Ստեփանոսի Պոլիս գտնուած ժամանակին պատահած դէպքերուն վրայէ, կարեւոր կը նկատենք մի քանի տեղեկութիւններ տալ անոնց մասին՝ որոնց զլիսաւոր դերակա-

տարր եղած է Լեւոն Գ. Իսաւրացի և իրեն յաջորդներէն սմանք։

«Այդ ժամանակներուն ամէնէն աւելի նշանակութեան արժանի պարագան է պատկերամարտութեան խնդիրը։ Բոլոր պատկերամարտ կայսրերուն մէջ Լեւոն Գ. և իր որդին Կոստանդին Գ. ամէնէն նշանաւորներն եղան։ Երկուքն ալ համառ ունէին իբրեւ իմաստուն և գործօն կայսրեր, և աշխատող էին իրենց տէրութեան յառաջդիմութեան համար։ Լեւոն Գ. 726ին հրովարտակ մը հրատարակեց, որուն մէջ կը յայտարարէր թէ պատկերներու պաշտամունքը ծնունդ տուած ըլլալով ճշմարիտ կոապաշտութեան մը, կ'ուզէր զայն ջնջել։ Կը պնդէր թէ կայսրը՝ իբրեւ զլիսաւորը կրօնքին ինչպէս նաև կառավարութեան՝ իրաւունք ունէր նմանօրինակ զեղծումներ բարեկարգելու։ Լեւոն իր այս առաջին հրովարտակով բաւական սեպեց վճռել թէ պատկերները եկեղեցիին մէջ ամէնէն բարձր պէտք է կախուին, որպէս զի կարելի չըլլայ զանոնք համբուրել և պաշտամունքի չափազանց նիւթական նշաններ շայլել անոնց։ 728ին՝ երկրորդ հրովարտակ մը՝ որ շատ աւելի խիստ էր, բացարձակապէս պիտի յապաւէր այդ բաները։ Նշխարաց պաշտամունքը, սրբոց ուղղուած աղօթքները հաւասարապէս արգիլուեցան։ Նոյն ժամանակի Պատրիարքը՝ Գերմանոս՝ բողոքեց այդ բանին դէմ, չստորագրեց հրովարտակը և հրաժարեցաւ պատրիարքական իշխանութենէն։ Եպիսկոպոսներու խումբ մը, զօրավարներ, բարձր դասի մարդեր ընդհանրապէս, համամիտ էին Լեւոնի խորհուրդներուն։ Բայց երբ օր մը վար առնել ուզեց Լեւոն կայսերական պալատին աւագ դրան վրայ կախուած պատկերը, որ Քրիստոսի նուիրուած էր և մասնաւոր յարգանքի առարկայ դարձած, խումբ մը կիներ՝ որոնք պալատին առջև կը գտնուէին, յուզուեցան և զգեստնեցին կայսերական սպան որ պաշտօն ունէր այդ գործը կատարելու։ Վերջ ի վերջոյ հարկ եղաւ դադարեցնել խռովութիւնը որ պատճառ եղաւ արիւնահեղութեանց և ձերբակալուելու» (l'Empire Byzantin, par G. Bayet)։

(1) Ըստ ամենայն հաւանականութեան այս իմաստասէրը մին էր այն անձերէն՝ որոնք Քաղկեդոնի ժողովը չէին ընդունած, եւ արքունիքէն հալածուելու երկիւղէն կ'ապրէին ի միայնութեան։

Ահա այսպիսի ժամանակի մը մէջ էր որ ապրեցաւ Ստեփանոս ի Կ. Պոլիս, բայց ինք ազատօրէն կը յաճախէր Ս. Ստեփանոս կոչուած գրատունը, և անկէջ կ'առնէր պէտք եղած գիրքերը զորս կը կարդար և կ'ուսումնասիրէր:

Պատմիչը կ'ըսէ նաեւ Սիւնեցւոյն համար թէ գնաց Աթէնք և հոն «վարժելով ամենայն իմաստիւք» դարձաւ ի Կ. Պոլիս: Այս անգամ ծանօթանալով Կ. Պոլսոյ մէջ Դաւիթ անուն մեծ հիւպատոսի մը՝ զոր կը յիշատակէ Օրբէլեան՝ «Թագաւորական սեղանոյ կենտոն»⁽¹⁾ կոչելով զնա, հաւանաբար հայադգի իշխան մը՝ որ հմուտ էր անշուշտ յունարէնի, անոր ձեռնառուութեամբ կը Թարգմանէ քանի մը գրութեանը որոնց մասին յետոյ պիտի խօսինք: Այդ միջոցին ծանօթացաւ նաեւ Գերմանոս Պատրիարքին հետ՝ որ որդին էր Յուստինոս Պատրիկին և ծնած ի Կ. Պոլիս:

ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՅՆԸ

Ո՛վ Տէր, խօսէ՛, միշտ կ'ունկընդրէ քո ծառան, Ծառադ, կ'ըսեմ, զի եմ եւ իսկ արդարեւ. Կ'ուզեմ՝ քիչ մը ուղիղ շաւղիդ յաւիտեան, Յորեկ գիշեր, խաւար ըլլայ քե առեւ: Հոգիով մը լեցուր ինծի այնպիսի, Որ սուրբ կամփիդ կարեւան ես քափանցել. Տո՛ւր մարման մը բռնեմ ու անթիծ, որպէսզի Ըմբռնեմ յար, Այմարտոքիւնդ անարգել: Բայց խօսե՛րդ փայլակնացայտ քող չըլլան, Զանոնք անձայն սրտիս խորը հոսեցուր, Որպէսզի իմ յուզուած հոգւոյս նանգիտ ծան, Ու զովարար ցոյի փոխեմ սրտիս հուր: Հրեայք ահիւ կը կարծեին քե դու չոկ Շանք եւ հուր ես, ոյժ մը փակդիւն աւերիչ. Ի՛նչպիսիքս խորը գրեթէ միշտ անհոգ, Զե՛իմ ուզեմ չեմ խօսե՛րդ սփոփիչ: «Խօսէ՛ մեզի, կ'ըսեին միշտ Մովսէսին, Բայց Տէրը քող բնաւ մեզի չը խօսէ, Զի ձայնն ահեղ եւ իր բարբառը ուժգին, Սոսկում կ'առքէ մեզի, ու մահ կը սկսի»:

(1) Ըստ կարծեաց Հ. Տաշեանի «Կենտոն» սխալ զրոյնեան մ'արդիւնք է, փոխանակ «կելար»-ի որ է լատիներէն cellarius բառը. այս բառը որ «մատանապետ» կը նշանակէ, ցոյց կուտայ արքունեաց մէջ Դաւիթ ունեցած պաշտօնը:

Չունիմ ես այդ սոսկումները, երբ կ'ընեմ Ուիս եւ աղօթք, եւս անկեղծ ֆան Իսրայէլ, եւ միշտ վստահ, խոնարհաբար կը գոչեմ, Ինչպէս երբեմն կը գոչէր Բոյդ Սամուէլ. — Աշխատի մեջ միայն ինձ կ'երկնջիմ, Բայց դարձեալ հոն միայն կ'ուզեմ ինչ չեմ. Ուրեմն խօսէ՛, Ծառադ հիւր, Աստուած իմ, Կ'ուզեմ չեմ, հընազանդիլ եւ օրհնել:

Թրգմ. զաղ. է
Սկիւտար ՍՈՒՐԷՆ ՎՐԴ. ԳԱԼԷՄԵԱՆ

ՀԻՆ ԷԶԵՐ

Այս ընդհանուր խորագրին տակ մերձ ընդ մերձ առիթը պիտի ունենանք ներկայացնելու կարեւոր էջեր հայ մատենագրութեան, Թարգմանաբար, Ժողովրդականացնելու համար մեր երանաշնորհ Նախնեաց ոսկեղինիկ խօսքերը: Այսօր, Ս. Աստուածածնի Վերափոխման տօնին առթիւ, կը ներկայացնենք երանելի վարդապետին՝ Գրիգոր Նարեկացիի «Խօսքն առ Տիրուհին», — որուն ակնարկած ենք Խմբագրականին մէջ — զեղեցիկ Թարգմանութեամբ ներշունչ գրող ու բանասէր Յ. Գ. Մրմընին էջի: Հետաքրքիր ընթերցողը առիթը պիտի ունենայ զայն թաղղատելու Նարեկի միւս աշխ. Թարգմանութեան հետ, զոր յաջողապէս ի գլուխ հանած է Տիար Միսաք Քօջունեան (Գլխիւ)։ —

ՆԱՐԵԿԻ

«ԵՒ ԱՐԴ Ի ՎԵՐԱՅ»,

Բ Ա Ն Ձ .

Նոյն հսկողին կրկին հեծութեան վերսին յաւերածն՝ առ նոյն աղերսական մաղթանք

Սիրտերու խորերէն խօսք առ

Տիրուհին

Ա. Եւ արդ՝ յետ այսքան յուռաւորութեանց և անարկու սրտաբեկութեանց. աստուածային բարկութեանց պակուցանող աստուկութեանց՝ ի սուրտ տաղմապած Թախտաղին հոգիով՝ կ'աղաչեմ քեզ, ո՛վ Ս. Կոյս, որ հրեշտակ ես մարդկային, քերորէ ես մարմնատեսիլ, արքայուհիդ

երկնաւոր, օդի նման անխառն, լոյսի պէս մաքուր, յստակ ու անշաղախ եւ առաւօտուն Քարծրացող արուսեակին պատկերին նման, գերազանց եւ անկոխելի սրբութեանց բնակութենէն աւելի, վա՛յր երանաւոր խոտուովն, Եղեմ շնչաւոր, ծառ անմահական կեանքի՝ պարունակեալ բոցեղէն սուրովը, և բարձրեալ Հօրէն զօրացեալ ու հովանացեալ, Հոգիին հանգիստով հանդերձեալ ու մաքրագործեալ, Որդիին բնակութեամբ յարգարեալ ու տաղաւարեալ: Հօրը միածինը Քու անդրանիկդ է, ծնունդով Քու որդիդ և աստուածայնութեամբ Քու Տէրդ: Դու՛ թէ՛ անաղտապէս մաքուր եւ, թէ՛ անրիժ բարի եւ, թէ՛ անարատ սուրբ եւ, թէ՛ խնամակալ բարեխօս եւ. ընդունէ՛ այս աղերսական մաղթանքս, որ կը դաւանիմ քեզ, եւ ընծայէ՛, ներկայացո՛ւր իմ նախնի բանաւ, զոր յօրինեցի մեծ ներբողիդ համար, խառնելով ասոր հետ քու պաղատանքդ: Ո՛վ տունկ օրհնութեան կեանքի պտուղին, հիւսէ՛ միացո՛ւր մեղուցեալիս դառն հեծութիւնը Քու երջանիկ ու խնկաւոր հայցուածներուն, որպէս զի միշտ օգնուած ու բարեգործուած Քենէ, ու ապաւինած Քու մոքուր ծնելութեանդ և լուսաւորուած՝ ապրիմ Քրիստոսի համար, որ Քու որդիդ ու Տէրդ է:

Բ. Ո՛վ խոտովանեալ մայրդ կենդանեաց, օժանդակէ՛ թեւատարած աղօթքովդ նաեւ այս երկրրի հովիտէն ելնելուս ատեն, որպէս զի առանց լկկանքի հետեւիմ պատրաստեալ օթեւաններուդ կեանքին, ու թեթեւնայ կատարածս ինծի համար, որ ծանրաբեռնուած եմ անօրէնութեամբ. ո՛վ ողջացուցիչ Եւսոյի ցաւերուն՝ բարեխօսէ՛ ինչդէ՛ աղաչէ՛, վասն զի նայելով Քու անճառ մաքրութեանդ՝ կը հաւատամ աւասիկ՝ որ խօսքդ ընդունելի է: Արտասուքով օգնէ՛ ինծի պէս վտանգեալին, գովեալդ ի կանայս. ծնողդէ՛, ծնողդ Աստուծոյ, իմ հաշտութեանս համար. հո՛գ տար ինծի թշուառիս համար, ո՛վ բարձրեալին խորանը. ձեռք տուր անկեալիս, ո՛վ տաճար երկնային. դարձեալ փառաւորէ՛ Քու որդիդ քեզմով՝

աստուածօրէն հրաշագործելու համար ինծի քաւութիւն և ողորմութիւն, ո՛վ աղախին Աստուծոյ և մայր. թո՛ղ բարձրանայ իզմով Քու պատիւդ և ցուցուի Քեզմով իմ փրկութիւնս:

Դ. Եթէ՛ գտնես զիս, Տիրամայր, թէ ողորմիս ինծի, Սրբուհի՛, թէ՛ շահիս կորսուածս, անարատ, թէ՛ յանձանձեւ ինկած խրտչածս, երջանիկ, թէ՛ յառաջ մատուցանես ամօթահարս, բարեշնորհ, թէ՛ ինծի միջնորդես յուսահատեալիս, մի՛շտ սուրբ կոյս, թէ՛ ընդունեցունես մերժուածս, մեծարեա՛լդ Աստուծոյ, թէ՛ ցուցնես ինծի գթածութիւնդ, լուծիչդ անէծքի, թէ՛ հաստատես ծփեալս, հանգի՛ստ, թէ՛ փրկես զիս իմ յուզումներուս խռովութիւններէն, խաղաղարար, թէ՛ հնարք մը ընծայես վրիպեալիս, գովեա՛լ, թէ՛ զինուիս մարտնչիս ինծի համար, ո՛վ նահանջող մահու, թէ՛ անուշես իմ դառնութիւնս, քաղցրութիւն, թէ՛ քակտես զիս բաժանող խորոցը, հաշտութիւն, թէ՛ բառնաս իմ անմաքրութիւնս, ո՛վ եղծող եղծումի, թէ՛ փրկես մահուան մատնուածս, կենդանի՛ լոյս, թէ՛ կտրես լալեացս ձայնը, բերկրութիւն, թէ՛ կազդուրես խորտակուածս, դե՛ղ կենաց, թէ՛ ինծի՛ կործանածիս ակնարկես, հոգելի՛ց, թէ՛ պատահիս ինծի ողորմութեամբ, կտա՛կ սրբազան, ո՛վ դու միայն օրհնեալդ երջանիկ լեզուներու ամբիժ շրթունքիդ վրայ. ահա կուտութեանդ կաթին մէկ կաթիլն անձրեւելով իմ վրայ՝ ինծի կեանք տալ կը զօրէ, ո՛վ մայրդ բարձրեալն Յիսուսի Տեառն երկնի ու բովանդակ երկրի: Չոր և ծնար անճառելի եղանակով բովանդակ մարմինովն ու աստուածայնութեամբ. զայն՝ որ փառաւորուած է էութեամբ Հօր եւ Ս. Հոգւոյն հետ, և անքննարար միացուած է մեր բնութեանը, ինք ամենայն ու ամէն բանի մէջ, մի անձն երրորդութենէն, ու անոր փառք յաւիտենից յաւիտեանս ամէն:

Թրգմ. Յ. Գ. ՄՐՄԱՐԵԱՆ

նաւոր չդատուեցաւ 1874ին Կեդր. վարչութեան Կրօն. Ժողովոյ որոշմամբ Կազմուած Յանձնաժողովին անդամոց կողմէ:

Չէրչեանն եւս իր դերն ունեցաւ Գարրիէլ Երանեանի հրատարակութեանց մէջ. Հայկական ձայնագրութիւնը աւանդաբար դասախօսելով մաս առ մաս թէ Քնարի միջոցաւ 1860ին և թէ՛ վարժարանաց մէջ: 1876ի միջոցները թաւական տարի երաժրշտութեան պաշտօն վարած է Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ, ուր երկու արժանաւոր աշակերտներ հասուցած է՝ Լեւոն Խանճեան և Մկրտիչ Մերկերեան:

*. Գարրիէլ Խանճեան (յետոյ քահանայ) ծնած է 1833ին և աշակերտած Արիստակէս Յովհաննէսեանի. օժտուած էր բնութեան՝ իր ձայնին զեղեցկութեամբ: Ղոր մինչև վերջը պահեց: Գարրիէլ ո՛չ Երանեանի պէս եւրոպականի յարեցաւ, և ո՛չ Չէրչեանի պէս քաղաքականի, այլ զոտ եկեղեց. երգեցողութեանց և հայկական սամուէրի հետեւող եղաւ. բայց միւս ընկերակցաց չափ քաջամուտ չըլլալով ձայնագրութեան, չկրցաւ գործօն մասնակցութիւն ունենալ Արեւելեան և Հայկական Քնարներու կամ անոնց յաջորդող պարբերական Հանդէսներու աշխատակցութեան մէջ, և միայն դասախօսութեան ասպարէզն ընդգրկեց, երկար տարիներ ուսուցչութեան պաշտօն վարելով Սկիւտարու Ս. Կարապետ եկեղեցւոյն մէջ, որով սահմանափակ եղաւ իր կեանքն ալ, առանց երբէք մասնակցած ըլլալու սա՛ կամ նա՛ Յանձնաժողովոյ գումարմանց:

1868ին քահանայ ձեռնադրուեցաւ Ս. Խաչ եկեղեցւոյն վրայ, ուր արդիւնաւոր պաշտօնավարութիւն ունեցաւ, ի վերջոյ անդամակցելով նաեւ Կրօն. Ժողովոյ:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԼ. ՇԽԱՐԷԱՆ

(Շարունակելի)

ԲՆԱԽՕՍԱ - ՇՈԳԵԲԱՆԱԿԱՆ

Վ Ի Շ Տ Ը

Բ (*)

Գիտութեան մարդն ինքն իսկ չի կրնար խօսիլ վշտին վրայ, առանց իր երկչոտ և յովդողդ բնաւորութիւնն ընդվզելու. բայց երբ լուրջ և անաչառ կերպով խորհի, կը համոզուի թէ բնախօսական երեւոյթին ամենամանրամասն ուսումնասիրութեան մէջ վիշտը ինդիր մըն է զոր բժշկը բարոյախօսը և օրէնագիրը պարտին լուծել միտաբան:

Վիշտը, որ ըստ ինքեան չարիքներուն չարիքն է ֆիզիքական աշխարհին մէջ, բարոյականին հիմունքը կը հաստատէ ինքը՝ սա նշանաբանով. «Մի՛ վշտանաւ եւ մի՛ վշտացնել ուրիշը»:

Երբ մարդ բնակարան մը, ապրուստ և համերաշխ ընտանիք մը ունենայ, ուր անկեղծ և անշահախնդիր սէրը տիրէ, վիշտը պատմութեանէն պիտի ջնջուի իսպառ: Քաղաքակրթութեան վսեմ նպատակը բնութեան սխալը սրբազրել է, անհատական և ժողովրդային կեանքն վիշտը ջնջել է: Եթէ մարդկութիւնը մեռնի անհետանայ այս վսեմ երազը իրագործելէ առաջ, վիշտը պէտք է որ գոնէ բացառութեան վիճակին մէջ գոյութիւն ունենայ:

Կրօնքը կ'ըսէ ոյր մարդուն. «Որքան տառապիս, վշտակրիս, այնքան մեծ պիտի ըլլաս»: Եւ կ'ըսէ կ'ըսէ. «Ցաւով պիտի ծնանիս»: Գիտութիւնը որ փորձած է արդէն առանց ցաւի ծնանիլ տալ, պիտի ըսէ մարդուն. «Քու ուրախութիւնդ քու օրէնքդ է և ուրիշներուն ուրախութիւնը քու բարոյականդ»:

Վիշտը կը ծառայէ նաեւ մեր բարոյական բարձրութեան: Մենք ամէնքս ալ կ'ուզենք խոյս տալ ֆիզիքական ցաւէն, բայց ամօթաւոր պիտի ըլլայինք բարոյական վիշտերու բնու ընդունակ չըլլալով. վտան

(*) Շար. նախորդ թիւէն եւ վերջ:

զի ան որ գութ, սէր չ'զգար, մեզի արհամարհանք կը ներշնչէ: Մեր սրտին և հոգիին լաւագոյն մասը կ'ընդլզի ֆիզիքական ցաւին դէմ: Կը ստորնանանք հպատակելով մարմնոյ ցաւերուն, մինչդեռ բարոյական տառապանքին առջեւ, մարդինքլինք մարդկային արժանապատուութեան նուիրական սրբավայրին մէջ կը զգայ, և կը հասկնայ թէ ի՞նչ գորովներ կը պահանջեն անոնց քաղցրութեան պարտքը, տուրքը:

Ամօթ մըն է ողբալ ֆիզիքական ցաւ մը, բայց լաւ չէ եսասիրութեան ամբողջ զգուշութիւններուն հետ խոյս տալ վիշտերէն, որք յառաջ կուգան բարեացակամ զգացումներէ: Ընդհակառակն պատուաբեր է բարձր կրթութեան մը միջոցաւ ինքզինք պաշտպանել և յաջողիլ զայնս չզղալ: Ազնիւ նկարագիրներու իտէալն է արհամարհել զբամի կորուստները, արժանապատուութեան անհարկի վիրաւորանքները, և ընդհակառակն, շատ զգայուն ըլլալ սիրելի անձի մը կորստեան, բարեկամութեան կամ սիրային մատնութեան կամ անհուատարմութեան և կամ հայրենեաց դժբախտութեան:

Մտային նուրբ կազմակերպութեամբ մը օժտուած և բարձր կրթութիւն մը ստացած մարդուն ակտակրութիւնները աւելի բազմաթիւ են քան անմշակ կամ գոեհիկ մարդուն ակտակրութիւնները, որոնք հազուագիւտ կամ շատ պարզ տեսակէն են: հետեաբար զգացումի վիշտերը թեթեւ են սովորական իմացականութեամբ մարդոց քով: Զօրաւոր ուղեղներու քով վիշտը կրնայ գրգռիչ մը ըլլալ, ներշնչումներու ազդիւր մը: Բայց շատ պարագաներու մէջ, ստորին դասակարգի մարդոց քով, վիշտը կ'ընկճէ միշտ մտածելու և խորհելու կողովութիւնը:

Եթէ կեղծաւորութիւնը մեզմէ չծածկէր միշտ մարդկային բնութեան այսքան մեծ մաս մը, բարոյական վիշտին մէջ պիտի գտնէինք մարդկային նկարագիրներուն ամէնէն կատարեալ զգայնաչափը (esthésiometre):

Ի զուր չէ որ ժողովրդային ողջմտու-

թիւնն այնքան դարեւ է վեր կը ծաղրէ այն մարդիկը, որոնք գիւրագգած են և ամենադոյզն քննադատութեան իսկ չեն կրնար հանդուրժել:

Վիշտը մեր ամենամեծ տկարութիւնն ըլլալով, պարտինք անոր յաղթել առնական և իմաստուն կրթութեամբ մը, ինչպէս ֆիզիքական ցաւն ընկճել՝ առողջապահութիւնով և խնամելով: Արթնցումները մեր տղոց մէջ քաջութիւնը, վասն զի վախը վիշտերու բեղուն աղբււրն է. դօրացները մարդկային նկարագիրը, ոչ թէ տանջանքի, մարտիրոսութեան հոմար, այլ փոխելու համար զայն վեհ և գեղեցիկ գործերու:

Ապերախտութիւններու, մոռացութիւններու և մատնութիւններու կամ անհաւատարմութիւններու ի միտքարութիւն, գերագոյն արգահատանք մը ցոյց տանք, յիշելով որ հարիւր անգամ աւելի լաւ է մտանել Բրիտոս ըլլալ քան մատնիլ Յուդայ: Երբ մարդ իր իսկ յարգանքին տէրն է և ոչ մէկ թշնամանք իրեն կը հասնի:

Անգլիոյ մէջ մարդիկ աւելի քիչ կուլան և աւելի նուազ կը տառապին քան թուրքիոյ մէջ. որովհետեւ անոնք սողայութենէ ի վեր մարդուած են խեղդելու վիշտը իրենց մէջ: Առնական կրթութիւնը, բարոյական այս անզգայութիւնը արուեստականօրէն կ'ընդունուի արժանապատուութիւնով կամ ուրիշ աւելի ազնիւ զգացումներու միջոցաւ: Ծշմարիտ, մեծ եսասէրները լաւ գիտեն չուտ վերջ տալ իրենց բարոյական վշտին, և շատ մը կարծեցեալ կրօնական համակերպութիւններ զրահներ են միայն, որոնք կը պաշտպանեն սիրտը, վիշտերու և ցաւերու դէմ:

Վշտին բնախօսութեան խորը թափանցելու, անոր վրայ կատարեալ գաղափար մը կազմելու համար, պէտք է կարդալ սակայն Վ. Հիւկոյի Les travailleurs de la mer հոյակապ գործը⁽¹⁾. —

(¹) Հիւկոյի այս գործը, ինչպէս L'Homme qui rit ն եւ Quatre-vingt-treize, հոյակապ, անմասն գործ մըն է, դժբախտաբար անտես առնուած մեր թարգմանիչներէն, հակառակ ամէն քաղաքակիրթ ազգերու լիզուներուն թարգմանուած ըլլալուն: Այս տեսակ գրական երկեր մէջ մէկ հրաշալիքներ են եւ իրաւունք ունին յաւիտենապէս պահելու իրենց գոյութիւնը:

Լէթիէրի, ծերուկ նաւագ մը, ունի գեղանի քեռսրդի մը՝ Տէրիւշէթ, և չոգե-
նաւ մը՝ Լա Տիւրան, որ իր ամբողջ
հարստութիւնն է։ Կեղծաւոր բարեկամ մը
կ'ընկզմէ չոգենաւը։ ասիկա կործանումն է
Լէթիէրիի։ Սակայն եթէ նաւուն իրանը
կորսուած է, միքենան անխնաս կը մնայ
երկու ժայռերու մէջ։ Լէթիէրի կը խոս-
տանայ զՏէրիւշէթ — և Տէրիւշէթ ինքն ալ
ինքզինք կը խոստանայ — անոր որպիսի
յաջողի աղատել չոգենաւը։ Ժիլիաթ Գ ան-
կեղծ նկարագրի և սկզբունքի տէր խո-
նար, բայց անվեհեր ձկնորս մը, որ մա-
քուր սիրով մը կը սիրէ զՏէրիւշէթ, և
փոխադարձաբար, կը փորձէ գերմարդկա-
յին դործը։ Կը կռուի բնութեան կատաղի
տարբերուն հետ։ Կը կռուի ծովին հետ,
կը կռուի հովին հետ, կը կռուի վերջա-
պէս մարմնոյն փաթթուած ճիւղային
պողպատի մը 250 ծծոցներով զինուած
ութ վիթխարի բազուկներուն հետ ծովին
մէջ, որուն վերջ ի վերջոյ կը յաղթէ։
Վարձատրութեան ժամը եկած է, բայց
այն վարձատրութիւնը, աւագ, չպիտի
գայ։ Ժիլիաթ, խաբուելով Տէրիւշէթի
կեղծաւորութիւնէն, կ'իմանայ թէ այլեւս
զինքը չի սիրեր, այլ բողոքական քարոզիչ
մը որուն կեանքը ինքն ատենօք փրկած է։
Ժիլիաթ նոյն վայրկեան կ'ունենայ այն
զգայումը ինչ որ կ'ունենայ մարդ երբ
դպիք թօրփիլի մը կամ երկտրականացած
Լէյտի սրուակին։ Հոգւոյն բանաստեղծու-
թիւնը գացած է այլ եւս։ Արդ, որովհե-
տեւ Տիւրիւշէթի այս անհաւատարմու-
թեան փոխարէն, Ժիլիաթ դարձեալ կ'ուզէ
որ ան միշտ երջանիկ ըլլայ, ինքը կը
քաջուի։ և նոյն իսկ Տէրիւշէթ երբ ծան-
րապէս կը հիւանդանայ, ինք՝ իր գեռ
ա'յնքան թարմ, ա'յնքան սրտագրաւ եւ
մաերիմ յիշատակներուն ի յարգանս,
պարտականութիւն կը համարի փութալ
Եկեղեցի, աղօթելու համար անոր բժշկու-
թեան և երջանկութեան, այն եկեղեցին ուր
կիրակի և տօն օրեր իրարու կը հանդի-
պէին։ Կ'երթայ նոյն իսկ նստարին առջեւ
անոր վկան ըլլալու, և երբ պատկի պա-
հուն այդ աննշան դիւղին մէջ պէտք կ'ըլ-

լայ մատանի մը դոր ի գուր կը փնտռեն
որպէս զի արարողութիւնը կատարեալ
ըլլալով կարենան իրենց սպասող չոգենա-
ւին հասնիլ՝ ճամբորդելու համար, Ժիլիաթ
մատեն կը հանէ մատանին և զայն Տէրիւ-
շէթի կուտայ, վերջին տխրագին նայուածք
մը ուղղելով այն զոյգ մը աչքերուն խորը,
կարծես ըսելու, «ինչո՞ւ իմ սրտիս հետ կը
խաղաս» և յիշեցնելու անոր իր խոս-
տումը, և եկեղեցիին մէջ իր սրտին խո-
րհրը թափանցող անոր թովիչ նայուածք-
ներուն սուրբ նշանակութիւնը։ «Նայ-
ուածքներ կան որոնք մէյ մէկ խոստում-
ներ են, երբ ոչ-կեղծաւոր արտէ մը կը
բղխին», կ'ըսէ հեղինակը։ Նորագասկինե-
րուն գոյքը ինք անձամբ փոխադրելով
չոգենաւ, կ'երթայ կը նստի ծովեզերքը
ջուրին մէջ, ձուքը ծնօտին, ճիշտ այն
տեղը ուր փրկեց քարոզչին կեանքը և
ուր, սպասելով մահուան, մակընթացու-
թիւնը կամաց կամաց պիտի ծածկէ զինքն
իր անգութ ալիքներուն ներքեւ։ Այն
վայրկեան երբ քարոզչին և Տէրիւշէթը
տանող նաւը կ'անհետանայ հորիզոնէն, ուր
յուրած կը մնան իր տխրաբեկ նայուածք
վշտաչարչար և խորտակուած արտով մը,
Ժիլիաթի գլուխն ալ ի սպառ կ'անհետա-
նայ անողոք, անկարելի կոնակներուն
ներքեւ, և ծովն իր սովորական հանդարտ,
միտդաղաղ վիճակը կը ստանայ, ամփո-
վելով այսպէս իր մէջ, իր խեղճին սիրոյն
բնութեան անգութ տարբերուն դէմ
ծեծկուող, մասնուած պլլ հաւատարիմ
զոհ մը։

Անկարելի է խորապէս չյուզուիլ այս
աննման և հոյակապ երկը կարդալով, ուր
Հիւկօ՝ հմայիչ և ջղուտ գրչով՝ զգայուն
սրտի մը վիշտը պատկերացուցած է իր
ամբողջ հզօրութեան մէջ, և ուր կը ցո-
լանան մարդկային կամքին և անկարելիին
և անհունին հետ բրած պայքարին սրտա-
յոյզ նկարագրութիւններն և շփուլութիւնը։

ԼԵՒՈՆ ԳԱՐԱԿԷՕՉԵԱՆ

Պէշիկթաշ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԴԷՊԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

Մեր տակերը միայն ազգին շահն ըլլալու է:

Ո՞րք ոտուն կրնայի գոհնել, երկու/ն ալ իմ զուականն են:

Ազգային իշխանութիւնը եւ Կուսակցութիւնները զիրար կը յաջնեն: Եթէ մին իյնայ, միւսն ալ կ'իյնայ:

Ս. ՊԱՏԻՍԻԱՐԷ (Ազգ. Ժողովին մէջ)

Ազգ. Ժողովոյ վերջին նիստէն ի վեր, երբ Ս. Պատրիարք Հայրը միթիւններու խնդրոյն առթիւ բրաւ ուշադրաւ յայտարարութիւններ, — որոնցմէ կ'արտագրենք վերոգրեալ խօսքերը, — Ժողովրդային միտքին մէջ շեշտուեցաւ ազգին զանազան կուսակցութիւններուն մէջ համերաշխութիւն մը յառաջ բերելու իղձը: Ասիկա չերմ փափաքն էր — և է միշտ — ամէն անոնց որ ամէն բանէ վեր ազգին օգուտը փնտրելու ողջամտութիւնն և անշահախնդիր ազատամտութիւնն ունին: Այդ փափաքը ամէնուն է, կուսակցականին և չէզոքին հաւասարապէս, որոնք կ'ողբան եղբայրապան կռիւներն և արիւնահեղութիւնները՝ ըստ երեւոյթին այնքան անկարեւոր խնդիրներու առթիւ: Բայց նշանակութեան զուրկ բառ մը կը մնայ ատիկա, ցորչափ գործնական քայլ մը չառնուիր իրագործելու համար այնքան գեղեցիկ գաղափարական մը: Ուրախ ենք սակայն որ ազգին կուսակցական մարմիններուն և ոչ-կուսակցականներուն միջեւ համերաշխ գործունէութիւն մը յառաջ եկած տեսնելու իղձը, զոր Տաճար փութացած էր յայտնիլ թերթն այժմու անօրէն-խմբագրին յանձնուելու օրն իսկ, այսօր աւելի լայն սահմանի մը վրայ կը յայտնուի, և ջանքեր լսուեցան — թէեւ ցարդ ամուլ — ազգ. երեսփոխաններուն միջեւ համաձայնութիւն մը գոյացած տեսնելու գոնէ սա միթիւնի խնդրոյն մէջ: Այդ փափաքը շեշտուեցաւ մէկէ աւելի թերթերու, մասնաւորաբար Ժամանակի մէջ, ուր ուշադրաւ էր անցեալ շաբ-

թու երիտասարդ համակրելի Արմաշականի մը՝ Տ. Սուրէն Վ. Գալէմեանի յօդուածը՝ «Դեպի ո՞ւր կը դիմենք», ուր կը խտանար տա գեղեցիկ գաղափարը. «Փոխադարձ դիջողութեամբ իրար հասկնալ, հաշտարար գետնի մը վրայ կանգնած՝ կեդրոնացնել մեր ուժերը, և լրջօրէն խորհիլ ազգին մտաւոր յառաջդիմութեան և անտեսական կեանքի զարգացման վրայ»:

Հակառակ մեր բոլոր լաւատեսութեան, յոյս չունինք բոլոր կուսակցականներն և չէզոքները, պահպանողականներն ու ազատականները միացած տեսնելու՝ իրենց ուղղութիւնով և գործելու մէթոտնորով, Բրնական ալ չպիտի ըլլար այդ, ոչ ալ օգտակար: Ամէն մարդ միեւնոյն նկարագրով չի ծնիր, ոչ ալ իմացական ու ֆիզիքական միեւնոյն ուժն ու կարողութիւնը՝ կ'ունենայ: Գաղափարներու, գործելակերպի տարբերութիւնները հասարակութեան մը ուժը կրնան կազմել. բաւական է որ ատենք ամէնքն ալ ձգտին միեւնոյն խելալ, գերագոյն նպատակին: Ազգին շահը, միմիայն ազգին շահը, անոր յառաջդիմութիւնը՝ մտաւորապէս և անտեսապէս:

Եւ այս գաղափարականին հոռնելու, հայեացքներու, բնութեամբներու և գործելակերպի ղգալի տարբերութեանց հակառակ, փափաքուած եղբայրական համերաշխութիւնը ձեռք բերելու համար միակ բան մը կը պակսի մեզի. — Ճշմարիտ ազատամտութիւնը:

Մեր համոզումն է թէ՛ ճշմարիտ ազատամտութիւնը ուրիշին կարծիքին, ուրիշին խօսելու ազատութեան, ուրիշին հայեցակէտին, հաւատքին բացարձակ յարգանքն է, ճանչնալն է մեզմէ բոլորովին տարբեր կարծիք և ըմբռնում ունեցողին խօսելու, իր հայեացքն համարձակօրէն յայտնելու անբռնարարելի իրաւունքը, պայմանաւ անշուշտ որ այդ ուրիշն ալ միեւնոյն յարգանքն ունենայ մեր համոզումին, մեր հաւատքին, և ճանչնայ մեր ալ անբռնարարելի իրաւունքը, մեր համոզումը պարզելու համարձակօրէն:

Այս տարրական պայմանն յիշեցնել հարկադրուելը տխուր պարտականութիւն մ'է

մեզի, տեսնելով կուսակցականներու իրա-
րու գէտ և մանաւանդ ոչ-կուսակցական-
ներու դէմ գործածած բուռն լեզուն, և
մանաւանդ բուռն միջոցները, ծաւալի է
լսել որ, բարեկրթութեան տարրական պո-
հանջներուն հակառակ, տարակարծիք ե-
ղողներ կը կոչուին վատեր, մատնիչներ,
խուժանապետներ, շէրխաթներ, ևն, և
իրք այն՝ բուռն վարմունքներ տեղի կ'ու-
նանան ամէն անոնց դէմ որոնք համակար-
ծիք չեն գտնուիր իրենց նոյն ընթացքը կը
գիտուի զժախտաբար ծայրայեղ պահա-
նողականներու կողմէ՝ կուսակցականներէ
ոմանց դէմ: Մեր համոզումն է թէ ժամա-
նակը չէ ներքին վէճերու, պառակտումի:
ներքին պայքարի ատենը չէ հիմա որ գո-
յութեան կսիւր ունինք մղելիք: Հիմա
իրարու ձեռք սեղմելու, մէկսիրտ մէկ հոգի
ընդհանուր բարունդ աշխատելու պէտք ու-
նինք: Մեծ իրաւունքով բռնած է Ս. Պատ-
րիարքը, թէ քողո'րն աչ իր զաւակներն են,
և թէ «ազգային իշխանութիւնն եւ կուսակ-
ցութիւնները գիրաւ կը յրացնեն. եթէ մին
իյնայ, միւսն աչ կ'իյնայ»: Ասկէ առաջ մենք
առիթը սենցած ենք (Տաւար, թիւ 12) հիւ-
ցումով խօսելու կուսակցութեանց և մաս-
նաւորապէս Դաշնակցութեան տիպար կազ-
մակերպութեան վրայ: Անոնք ուժ մը կը
կազմեն. բունապետութեան շրջանին,
սկզբնական ասորիք նպատակով մը հիմ-
ուած, անոնք կրնան հիմա իրենց օրինակելի
օրինակելով և կանոնաւոր կազմակերպու-
թեամբ հզօր օժանդակ մ'ըլլալ ազգային
իշխանութեան՝ պետական յարգերու-
թեանց մէջ, զաւտուի ցաւերու ամբարան,
կրթական ու բարեգործական ձեռնարկնե-
րու, և ընկերային բարեշրջութեան ճամ-
բուն մէջ: Մենք վստահ ենք թէ ամենէն
աւելի պահպանողական, շերիաքնի նկատ-
ուած շրջանակներու կարծիքին թարգմանը
կ'ըլլանք այս սողներով: Բայց միեւնոյն ա-
տեն իրաւունք ունինք պահանջելու որ
ամէնքն ալ ճանչնան և յարգեն ազգային
իշխանութեան հեղինակութիւնը, բոլոր-
ւին անոր շուրջը, ուժ տալու անոր պա-
հանջներուն՝ իրենց կազմակերպական մի-
ջոցներով. միւս կողմէ անհրաժեշտ պա-

հանջ մ'է որ այս կամ այն պաշտօնեային,
այս կամ այն եկեղեցականին զեղծումը
կամ գայթակղալից արարքը պատճառ
չնկատուի մէկ ջուրով լուսուլու նոյն դասա-
կարգն ամբողջ: Եկեղեցական, աշխարհա-
կան, կուսակցական, չէզոք, պահպանո-
ղական, ազատական, — օրինաւորութեան,
բարեկրթութեան սահմանին մէջ պաշտպա-
նելով հանդերձ մեր զաւաժաւորները, — փո-
խադարձ յարգանքով, փոխադարձ իրերա-
հասկցողութեամբ ձգտելու ենք միեւնոյն
գերագոյն նպատակին, այն է Հայուն տալ
իրեն արժանաւոր դիրքը ազգերու խառ-
նարանին մէջ որ սահմանադրական ազատ
թուրքիա կը կոչուի, արժեցնել անոր ար-
դար իրաւունքները, և ներքին կեանքի
մէջ ձգտիլ ազգին մտաւորական, բարոյա-
կան և տնտեսական յառաջդիմութեան:
Մէկ սիրտ, մէկ հոգի ի գործ դրուած ջան-
քեր լաւագոյն արդիւնքը կուտան միջո-
ւ և մինչև այն ժամանակ կարծիքի շատ խո-
րունկ նկատուած տարբերութիւններ հար-
թուած պիտի ըլլան: Համոզումի ասարեւ-
րութեան անյատակ վիճելը լեցում, և
ինքնին ձեռք բերուած պիտի ըլլան եկե-
ղեցական, ազգային, ընկերային. այնպիսի
բարեքուսններ, որոնց համար այսօր ի գո-
ր իրարու գլուխ կը պատռենք:

Անգլիացի իմաստասէր մ'ունին Փրան-
սացիներուն համար, որ կրնայ սապէս
թարգմանուիլ. — «Ինչ կ'ընէ Փրանսացի
մը: — Ուրիշ Փրանսացի մը վրայ գէշ կը
խօսի»⁽¹⁾: Ընդհակառակն, Անգլիացիները,
ինչ որ ալ ըլլան իրենց քաղաքական հա-
մոզումները, հոյակապ համերաշխութեամբ
մը սրտի միեւնոյն տրոփումը կը զգան,
ամէն անգամ որ ազգային շահուն վրայ է
խնդիրը: Փրանսացի գրողներ յորդոր կը
կարգան իրենց հայրենակիցներուն՝ միմիայն
հազուադէպ ձեւին մէջ չհետեւիլ Անգլիացի-
ներուն, այլ եթէ հնար է, իւրացնել անոնց
այդ էսպէս կենսունակ յատկութիւնը. —
«Համերաշխ խորհիլ ու գործել յօգուտ մ-
մէնուն»:

(1) Ո'րքան աւելի իրաւունքով Անգլիացիները
պիտի կրնան այս առածը պատշաճեցնել Հայերու
համար:

«Կուտակցութիւններն ինքնին չափ երկ-
րորդական կը մնան հայրենիքին շահուն
առջև : Ատիկէ դատ . ընկերային ճշմարտու-
թիւններ կան, անցեղի՜ ճշմարտութիւններ,
որ կրնան համաձայնութեան գետին մը
կազմել ամէնուն համար : Առո՞ք են՝ աշ-
խատութիւնը, հաւատարմութիւնը հայրե-
նիքի հողին, կարգապահութիւնը, քաջա-
տրտութիւնը քաղաքային և զինուորա-
կան կեանքի մէջ, յարգանքը ուրիշին հա-
ւատքին և անպատեթեան, խեղալի սէրը» :
(Փիլիպ Պոլս) :

Շատ ի դէպ են այս խօսքերը մեզի հա-
մար, ամէն ժամանակ, բայց մոռումնազ
հիմայ որ ազգերու կեանքին մէջ հազուա-
դէպ կ'երայով երեւցած տաղնապարի շրջանէ
մը կ'անցնինք :

Ո՞րքան բարեպաշտե՞հ էր յարգելի
Տիար Խաչատուր Գուրգենի բանաստեղ-
ծիւնը՝ Պէշիկթաշի Մաքրուհեան վարժա-
րանի սրահին մէջ, ուր ոյնքան սրտայոյզ
ճճով մը խօսեցաւ համերաշխութեան պէտ-
քին վրայ, և ուր մեծ իրաւունքով բաւ-
թէ երբ մենք անպատեթեան հռչակումէն
ետքը փութացինք սնդմել տրեւնտ ձեռ-
քեր, մոռնալով թիւաւորներու նահատա-
կութիւնը, եւ ողջագուրուեցանք մեզ
ապանողներուն հետ՝ հայրենիքի աղիւզայ
երջանկութեան համար, անկարելի է չյու-
տաղ որ նոյն բարձր գաղափարին առջև
պիտի մոռնանք կուսակցական ճղճիմ վէ-
ճերն ու անհամաձայնութիւնները, եղբայ-
րական ձեռք կարկտելով մէկմէկու, ան-
կեղծ գրկախառնումով մը փութելու իրա-
րու, և միասիրտ աշխատելու ազգին գե-
րազոյն շահին ի նպաստ :

Այդ յոյսը մենք պ'ունինք մեր սրտին
խորը . ո՛ւր էր թէ չո՛ւտ իրագործուէր,
տալու համար բաղձացուած արդիւնքը,
թանկագին առիթներ ձեռքէ չփախցուած
բոլորովին :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Մրազրերը իրարու կը յաջորդեն եկե-
ղեցական բարեկարգութեան : Սեպտեմբեր
14ին գումարելի Համոզումարը բաւական
գործեր պիտի ունենայ կատարելիք : Տ.
Գնէլ Մ. Վ. էն և Խոյեան Տ. Վահան քահա-
նայէն ետքը, Կրճն. Ժողովոյ անդամներէն
Տ. Սուքիաս քհ. Պալքճեան եւս կարգ
մը առաջարկներ ներկայացուցած է Կրճն.
Ժողովոյ անցեալ շաբթուան նիստին, Հա-
մագումարի գրասեղանին վրայ դրուելու
համար : Միւս կողմէ, իբրեւ այժմեական
հարց, օրաթերթին եւս ձկսած են զբա-
ղիլ եկեղեցական բարեկարգութեանց
խնդրով : Ազատամարտի անցեալ շաբթուան
թիւի մը մէջ կը կարդայինք շահեկան
յօդուած մը, որով կը քննադատուէր
կուսակցութեան դրութիւնը : Բիւզան-
դիոն կը հիւրընկալէր ուշագրաւ գրութիւն
մը՝ Ա.Մնն. Ս. Պատրիարք Հօր հասցէին
ուղղուած՝ Վրոյր ծածկանումն տակ պահ-
ուող եկեղեցականի մը կողմէ, որ իբրեւ
ամենակենսական հարց մէջտեղ կը նետէր
ամուսնական և ամուսնալուծական օրէնքի
մը պատրաստութեան ստիպողականու-
թիւնը, ինչ որ անցեալ շաբթուան թիւով
մենք եւս կը չեղտէինք ստիպողաբար .
նոյնը կը պահանջէն խմբագրութեանս ուղ-
ղուած կարգ մը գրութիւններ՝ ձեռնառ
եկեղեցական և աշխարհականներու կողմէ :
Թիֆլիզի մէջ եւս Հովիտ ձեռք առած է
խնդիրը, և կ'ընէ կարգ մը առաջարկներ՝
արդարացի կամ ոչ՝ մինչեւ պահանջելու
աստիճան որ եկեղեցականները չստիպուին
ժողովուրդէն տարբեր տարազ կրելու,
են. : Աշխարհական գրողներ եւս չափ
իրաւունքով սկսած են իրենց կարծիքները
մէջտեղ դնել, քանի որ եկեղեցին միայն
հոգեւորականին չէ, ժողովուրդին է ա-
ռաւելապէս : Պարոյր Բ. Քէչեան եկեղե-
ցական արարողութեանց կրճատումը կը
պահանջէ, իսկ Զիֆթէ-Սարաֆ՝ ամէն
բանէ առաջ եկեղեցականութեան մաքրա-
գործումը, և ցաւ կը յայտնէ որ անցեալ
տարի ալ, այս տարի ալ աշխարհական-

նե՛րը կը ստիպուին այս կէտը յիշեցնելու եկեղեցականներուն: Իրաւացի են ազնիւ գրագէտին գիտողութիւնները, բայց կըրնանք ապահովցնել զինքը թէ գիտակից եկեղեցականներու մեծամասնութիւն մը համամիտ է իրեն, և աշխարհականներուն չափ. — եթէ ոչ անոնցմէ աւելի — փափաքող է եկեղեցականութեան մաքրագործումին: Մինչ իր յօդուածը կ'երևար Բիւզանդիոնին մէջ, Տաճարի նոյն օրուան թիւին (Օգոստ. 7) մէջ արդէն հրատարակուած էր մեր խմբագրականը՝ ուր նոյն պահանջումը կը շնչուէր ուժգնութեամբ:

Ամէն պարագայի մէջ հարցը կարեւոր է և ստիպողական. և որպէս զի ամէն կողմէ տեղացած առաջարկներու, ծրագիրներու Լաթիւրինթոսին մէջ չմտորի Համագումարը, մենք պիտի առաջարկէինք այժմէն յանձնախումբ մը կազմել կարող եկեղեցականներու և բանխմայ աշխարհականներու մասնակցութեամբ, դասաւորելու համար զանոնք, միտցնելու համար նոյնիմաստ առաջարկները, և որոշ ծրագիր մը բերելու Համագումարին, որպէս զի յումպէտս չվատնուին թանկագին ժամանակներ:

Այս առթիւ շահեկան է առաջ բերել Աւեսարեւի մէջ Հայ Կեանքին վրայ իր ջղուտ և ազգասիրական զգացումներով թրթռուն յօդուածներովը քաջամանօթ գրողի մը՝ Հ. Մամիկոնեանի գիտողութիւնը, որով ջնորհաւորելով հանդերձ Պոստայ հոգեւորականութիւնը՝ եկեղեցական բարեփոխութեանց ճամբուն մէջ առաջին գործնական քայլն առնելուն համար, կը դիտէ թէ՛ ներկայացուած առաջարկները լուրջ հետազոտութեան մը, բնութանուր և եկեղեցական կեանքի որոշ բաժանումներուն ուսումնասիրութեան արդիւնքը չեն թուիր, այլ պատահաբար ուշադրութեան առարկայ եղած քանի մը կարեւոր և անկարելոր խնդիրներ յուզուած են: Անարդար չենք գտներ այս գիտողութիւնը, ուստի պիտի փափաքէինք որ նոյն ինքն Ս. Պատրիարք Հօ՛ր նախագահութեան տակ գտնուէր քիչ մը վերը առաջարկուած յանձնաժողովը, գիտակցօրէն զրազելու համար այս շատ կարեւոր խնդրով, և լուրջ, մշակուած ծրագիր մը կարենալ ներկայացնելու համար Ս. Էջմիածին գումարեկի՝ Եկեղեցական Համագումարին Ժողովին:

ԿԻԼԻԿԻՍՑ Ս. Կաթողիկոսն հետզհետէ վիճակին այլեայլ կողմերը Կաթողիկոսական փոխանորդներ կը նշանակէ: Տ. Ներսէս Ծ. Վ. Դանիէլեանի տեղ՝ Կաթողիկոսական փոխանորդ կարգուած Տ. Պետրոս Վ. Սարաֆեան որ Պէրութ կը մնար՝ մեկնել է, իր պաշտօնատեղին երթալու համար, և Երուսաղէմէն իրեն տեղ նշանակուել է Տ. Նիկողոս Վ. Թրանկիւլեան իրրեւ տեսուչ Պէրութի: Սակե զատ Կիւրինի համար Կաթող. փոխանորդ նշանակուած Ըլլարաթ Տ. Կորիւն Վ. Էլլիտրամեան՝ Եդեսիայէն ետեւ ելած է իր նոր պաշտօնատեղին երթալու համար: Ուրիշ անհովիւ տեղեր ալ հետզհետէ նոր անուանումներ պիտի ըլլան:

ԴՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆԻ, նշանաւոր հրատարակագիրն և իր արդիւնաւոր աշխատութեան արդիւնքով՝ 1896ի կոտորածէն փրկուած հազարաւոր որբերու օգնութեան համող մեծ բարերարին մահուան տասնամեակին առթիւ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուել է Տփղիսի վանքին աւագ եկեղեցին մէջ. ի ներկայութեան բոլոր քահանաներու, մամլոյ ներկայացուցիչներու և Հայ ու օտարազգի բազմութեան: Իրաւամբ կը հարցուի թէ նոյնը ընելու պարտաւոր չենք մենք Թրքահայերս, ի նշան երախտագիտութեան:

ՄԻՍՏԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ կրթական և գիւղատնտեսական գործին ալ աւելի զարկ տալու համար Արամ էֆ. Հալաճեան Պատրիարքարանի արտօնութեամբ և ժապաւինեալ տոմարով հանգանակութեան ձեւնարկած է: Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Արամ էֆ. ի հայրը՝ Բարսեղ էֆ. Հալաճեան՝ առաջին արձանագրութեան հղած է 500 ոսկի՝ նուիրատուութեամբ մը: Միացեալ Ընկերութիւնը՝ հիմնական կանոնագրին թ. յօդուածին համեմատ «Բարերար» հրուշակած է Ն. Վսեմութիւնը:

Տ. ԿՈՄԻՏԱՍ Վ. գործունէութիւն կը ցուցնէ նոյն իսկ իր ծննդավայրին՝ Քէօթահայի մէջ, ուր գացած էր կաղողուրուելու համար իր յոգնութիւններէն: Թերթերու մէջ կը կարդանք թէ նոյն քաղաքի ազգ. երկսեռ վարժարաններուն ի նպաստ երկու համերգ տուել է, որոնք կատարեալ

յաջողութեամբ պատկուեր են: Երգչա-
խումբը կազմեր է 108 հոգիէ, զպրոցա-
կաններէ և արհեստաւորներէ: Ներկայ ե-
ղեր են քաղաքին կառավարական պաշտօ-
նէութիւնը և հայ ու թուրք զրեթէ ամ-
բողջ հասարակութիւնը: Զուտ հասոյթը
100 օսմ. ոսկիի կը հասնի: Տ. Կոմիտաս
վարդ. յառաջիկայ Հոկտեմբերի առաջին
կէսին մայրաքաղաքիս մէջ ևս համերգ-
ներ պիտի տայ, զո՞հացնելու համար ամէն
կողմէ յայտնուած հետաքրքրութիւնը:

Ս. ՊԱՏՐԻԱՐԺ Հայրն անցեալ շաբթու
Հրէից խախտմապետին այցելած ըլլալով,
Բարունակաբար շաբթուս փոխադարձ այցե-
լութեան եկաւ Ս. Պատրիարքին:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԴՆ. ի նիստին մէջ ի
նկատ առաւ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին
մէկ գիրը՝ այս տարուան հունձքին նուազ
և նոյն իսկ փճացած ըլլալուն մասին, որով
արդէն արկածեալ ժողովուրդը աննարին
կարօտութեան մատնուած է: Միւս կողմէ
նպաստները դողրած և որսանոցներու մա-
տակարարութեան միջոցները պակսած ըլ-
լալով, Ժողովը՝ խորհրդակցութենէ մը
ետքը՝ զիտելով որ Օսմ. Խորհրդարանը
այս կարօտութեանց համար գումար մը
քուէարկած է, որոշեց ստիպողաբար նոյն
գումարին վճարումը խնդրել Բ. Դուռնէն,
իր բարեգործական նպատակին յատկացուե-
լու համար: Ժողովը զոհունակութիւն
յայտնեց Գարակէօղեան արհեստական որ-
բանոցի Խնամակալութեան՝ Ղալաթիա,
Վոյլօտա փողոցի Ազգ. Կալուածին սեփա-
կանութեան զէմ բացուած զատին առթիւ
ձեռք առած օրինական միջոցներուն հա-
մար, և խոստացաւ իր կողմէ կարեւորն
ի գործ դնել ազգ. սեփականութեանց իրա-
ւունքը պահպանելու համար: Ժողովը ո-
րոշեց գործադրել պատկազրութեանց առ-
թիւ Տնտես. Խորհրդոյ պատրաստած նոր
սակացոյցը, նաև 10% զանձոււմ մ'ընել
քահանայից պատկերասլան, և յատկացնել
այրիացեալ կարօտ երիցունեաց:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆ. ի նիստին մէջ ո-
րոշեց չըջաբերական ուղղել Գաւառի ա-
ռաջնորդներուն և Կրօն. Ժողովներուն,

ծանուցանելով որ Կեդր. Կրօն. Ժողովոյ
նախաձեռնութեամբ խորհրդակցութիւններ
կը կատարուին եկեղեց. ծիսական բարե-
կարգութեանց մասին, և խնդրելով որ ի-
րենք ևս իրենց ղիտողութիւններն և
կարծիքները տեղեկագրեն փութով, ի նկատ
առնուելու համար ի մօտոյ դումարութիւք
Համալուծարին մէջ: Եկեղեց. բարեկար-
գութեան գրաւոր առաջարկներ ներկայո-
ցուցած են նաև Տ. Տ. Սուքիաս, Աբէլ,
Խորէն և Յուսիկ քհնիքը: Ժողովը Տրա-
պիզոնի առաջն. բնարեկեաց հետեւեալ
ցանկը կազմեց, Տ. Գաբրիէլ եպ. Ճէվա-
հիրճեան և Տ. Դրիգորիոս Պալազեան, և
Տ. Վահան Յակօբսն Մ. Վ. նիքը: Ժո-
ղովը որոշեց որ հարստեանց առթիւ քա-
հանայից պատկերասլան զոյացեալ 10% ը
այսուհետեւ անխափան յատկացուի այրիաց-
եալ կարօտ երիցունեաց: Ապագային Աւա-
գերէցներու Ժողով մը պիտի ստանձնէ ա-
նոր մատակարարութիւնը. առ այժմ, գոյա-
նալիք դրամը յատուկ տօմարի սպճանա-
գրութեամբ անձեռնմխելիօրէն ի պահ պիտի
մնայ ի Պատրիարքարան: (Մինչև հիմայ
վար դրուած դումարներն ի՞նչ եղած են:
Մ. ԽՄԲ.) Բերայի աւագերէցին և եր-
կու քահանայից միջև ծագած խնդրոյն տե-
ղական քննութեան համար քննիչ Յանձ-
նաժողով մը կազմուեցաւ Տ. Մաղաքիա
եղիսի. Տէրունեանէ, և Տ. Տ. Աբէլ քհնիքն:

ԳՈՒՄ-ԳՍԲՈՒԻ Դուռսի նորընծայ Տ.
Յարութիւն քհնյ. Աստուածատուրեան՝ ա-
ռաջնորդութեամբ Տ. Վաչտակ քհնյ. Գալ-
բազճեանի՝ Կրօն. Ժողովոյ ներկայացաւ
անցեալ շաբթու, իր քառասունքէն ելնելուն
առթիւ: Ամեն. Ս. Նախագահ հայրը պատ-
շաճ յորդորները կարգաց անոր, և Ժողո-
վական հայրերը մաղթեցին «լինել մշակ
առանց ամօթոյ»:

ԱՐՏՕՆԱՏԷՐ


ՀՐԱՅԵԱԿ ԲՆԵ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲՆԵ. ԿԷԶԻՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

Զաւմաբնդար, Յակոբեան խան



ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՃԱՇԱԿ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ, ծաղկափաղ աշխարհաբար լեզուէ, բազմաթիւ գրական կենսագրութիւններով և ծանօթութիւններով: Աշխատասիրութիւն Ա. Պիպեռնէսի: Դ. Տպագրութիւն: Ցարդ հրատարակուած նմանօրինակ դասագիրքերուն մէջ լուսագոյններէն մէկը՝ իր խնամուած պարունակութեամբ, ուսանայ և թրքահայ նշանաւոր գրողներու գործերէն քաղուած, և կենսագրական ընդարձակ ծանօթութիւններով ճոխացած: Պիտի բաղկանայ երկու ստուար հատորներէ: Հրատարակուած է Ա. հատորը՝ 450 երեսէ բաղկացած: Գին՝ քարդօն կաղմ և թղթակաղմ՝ 10 դրուշ, լաթակաղմ 12¹/₂, փառակաղմ 15, ամենաշքեղ կաղմ (նուէրի համար) 20 դրուշ: Կեդրոնատեղի Ա. Պիպեռնէսի գրատուն, Պապը Ալի ճատտէսի, թիւ 12:

3—1

ԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԳԱՐԷՆ ՄԱՀՄԷՏ

Իմաստասիրական գործ Թ. Բարլալ անգլիացիին: Գին 5 դրշ: Կը ծախուի Պալինց, Սիւնեաց և Աշճեան գրատունները:

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ

Գ Ո Ր Ծ Ե Ր Է Ն

Հին Օրեր և Պուէտ Սաչատուր Միսաքեան, գին 7ու կէս դրշ:

19րդ դար, Յովհ. Պրուսացի Տերոյենց, գին 12ու կէս դրշ:

Ստուերհ հին դէմքերու, տաճնեակ, գին 5 դրշ:

Թրքահայ հին վիճառականութիւն եւ վիճառականի, գին 10 դրշ:

Ալեքոյիս, տաճնեակ իմաստասիրական, 7 դրշ:

Պասմոթիւն Թուրքահայոց (ի բաժանորդագրութիւն) մէկ բաժին 30 դրշ:

ԱՂՋԿԱՆՑ ԱՄԵՐԿ. ԳՈՂԷՃ, ԻԻՍԿԻԻՏԱՐ

Իւսկիւտարի ԱղՋԿԱՆՑ Ամերկ. Գողէճին յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 14ին (Ն. Տ.) կէսօրէն ետքը: Գողէճը Արուեստից, Գիտութեան, Լեզուներու և Շրաժըշտութեան մէջ զարգացման գիւրութիւններ և խնամոտ բարոյական կրթութիւն մը կը հայթայթէ իր ուսանողներուն:

Նախակրթարանի մասը նոյնպէս պիտի բացուի Սեպտ. 14ին կէսօրէն ետքը, վարժարանին Արնավուտգիւղի ծովեղերեայ կալուածին շէնքին մէջ, որուն կից բնակարանի մը մէջ պիտի ըլլան նոյն բաժնին տեսուչ Տր. և Տիկին Ուիլիւմ Ս. Մուրէյ: Այս վարժարանը աշակերտները կը պատրաստէ ուղղակի Գողէճ մօտնելու: Նախակրթարանի բաժնին մէջ 10 տարեկանէն վար ոչ մէկ աղջիկ պիտի ընդունուի իբրեւ գիշերօթիկ: Թէ՛ Գողէճի, թէ՛ նախակրթարանի համար նամակով գիմումներ կարելի է ընել Գողէճին Տնօրինուհիին, Տր. Փաթրիքի: Շնորհիւ Անգլ. նամակատան, կամ Սեպտ. 1էն (Ն. Տ.) ետքը Գողէճի կամ նախակրթարանի շէնքերը անձամբ գիմուելով Տնօրինուհիին:

1—2

“ARMENIA”

Անգլիերէն ամսագիր, որ գեղեցիկ ու իրապէս օգտակար նպատակն ունի առանց կուսակցական շահերու ծանօթացնել Հայ յուլիւնը՝ Ամերիկայի, և պաշտպանել Հայ ազգին պատիւն ու շահերը: Ասկէ առաջ կը հրատարակուէր ի Պոսդըն, այժմ կը շարունակուի Նիւ-Եորք, խմբագրութեամբ Ամերիկայի ամէնէն աչքառու գրողներու: Տարեկան բաժնեգին՝ Ամերիկայի համար՝ 1 տոլար, Թուրքիոյ 30 դրշ: Հասցէ՝ Editor of «Armenia», NEW-YORK, 33 Union Square.

